013-4234

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N ՀՀ ՏԶՆՆ-ՇՀԱՇՁԲ-15/3-17-11/1-25-17**

ք. Երևան «20» 05 2017թ

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը**, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Ա.Շահնազարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ակտիս» ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Գ.Հակոբյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները. Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 4 277 800 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել նման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (շահույթները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի պայմանագրային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | **«Ակտիս» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 | Հասցե՝ ք.Երևան, Արտաշեսյան 4 |
| ՀՀ 900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՀ 1800123758500 |
| ՀՎՀՀ 02505983 | Ֆինանսական բանկ ՓԲԸ |
| | ՀՎՀՀ 01240826 |
| **Ա. Ջանինազարյան** | **Գ.Հակոբյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Հավելված 1
«20» 05 2016թ. կնքված
N ՀՀ ՏԶՆՆ-ՇՀԱՇՁԲ-15/Ծ-17-11/1-25/17 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
## ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ

Ձեռքբերվող աշխատանքի նկարագիր

| Հ/հ չափ. | Աշխատանքի անվանում | Չափման միավոր | Գումար | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակային աշխատանքի հավաքածուի պատրաստում | դրամ | 3 601 000 | Հավաքածու, որը ներառում է՝ օրացույց, սեղանի լոգոյով /70 հատ/, չափսը՝ /230x115 x 60/մմ: Էջերի չափսը՝ 90 x100 մմ: Տպագրությունը՝ 4+4: Էջերի թուղթը կավճապատ՝ 170գ/մ²: Կազմի /կանգնակի/ թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 330գ/մ²: Կանգնակի վրա երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Օրացույցի էջերի ամրացման ձևը մետաղական զսպանակներ; օրացույց, պատի լոգոյով /70 հատ/, չափսը՝ /820x330/մմ: Թերթերի քանակը՝ 36 /160x330/մմ: Թուղթ կավճապատ՝ 150գ/մ²: Տպագրությունը՝ 4+0: Կազմի թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 300գ/մ²: Կազմի վրա երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Օրացույցի էջերը ամրանում են չափիկին մետաղական զսպանակներով: Շարժական օրացույց /курсор/; ամենօրյա գրառումների գրքույկ /70 հատ/, չափսը՝ /243x170/մմ: Թերթերի քանակը՝ 154, թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 80-85գ/մ² Գրքույկի առաջին երկու մամուլները տեղեկատվական են /հայերեն-ռուսերեն/, մնացած մամուլները անտպագիր: Տպագրությունը՝ 2+2: Թելակար, էջանիշ: Կազմի ամրացման թուղթը /ֆորզաց/ բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 160գ/մ²: Կազմը կաշվե "Wintan Nubes": Կազմը եզրակարված, անկյունները կորացված, սպունգ: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Գրքույկի միջուկի կողային մասերը արծաթափայլ կամ ոսկեփայլ, շաբաթյա գրառումների գրքույկ /70 հատ/, չափսը՝ /360x130/մմ, թերթերի քանակը՝ 60, անտպագրությամբ: Թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 80-85գ/մ²: Կազմի ամրացման թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 300գ/մ²: Տպագրությունը՝ 2+2: Կազմը կաշվե "Wintan Nubes": Կազմը եզրակարված, անկյունները կորացված, սպունգ: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Գրքույկի միջուկի կողային մասերը արծաթափայլ կամ ոսկեփայլ: Էջերը ամրանում են չափիկին մետաղական զսպանակներով, հեռախոսների գրքույկ այբբենական /70 հատ/, չափսը՝ /160x220/մմ, թերթերի քանակը՝ 110, թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 80-85գ/մ², կազմի ամրացման թուղթը բարձրորակ դեկորատիվ "Fedrigoni" 300գ/մ²: Տպագրությունը՝ 2+0: Կազմը կաշվե "Wintan Nubes": Կազմը եզրակարված, անկյունները կորացված, սպունգ: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անվանման ոսկեգույն կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Գրքույկի միջուկի ներքին մասերը արծաթափայլ կամ ոսկեփայլ: Միջուկը ամրացված է կազմին բարձրորակ դիզայնային "Fedrigoni" 300գ/մ² տակդիրով; ամենօրյա նշումների տետրակներ /70 հատ/, չափսը՝ /160x200/մմ: Թերթերի քանակը՝ 110: Թուղթը բարձրորակ դիզայնային "Fedrigoni" 80-85գ/մ²: Ամրացման թուղթը բարձրորակ դիզայնային "Fedrigoni" 330գ/մ²: Տպագրությունը՝ 2+0 Նոթատետրի կողային մասերը արծաթափայլ կամ ոսկեփայլ: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Էջերը ամրանում են շապիկին մետաղական գալարներով: ամենօրյա գրառումների գրքույկ, փոքր /70 հատ/, չափսը՝ /100x150/մմ: Թերթերի քանակը՝ 112: Թուղթը բարձրորակ դիզայնային "Fedrigoni" 80-85գ/մ²: Մանրամասները ամրացված: Տպագրությունը՝ 2+2: Թելակար, էջանիշ: Կազմի ամրացման թուղթը /ֆորզաց/ բարձրորակ դիզայնային "Fedrigoni" 140գ/մ²: Կազմը կաշվե "Wintan Nubes": Կազմը ներակարված, անկյունները կլորացված, սպիտակ: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Գրքույկի միջուկի կողային մասերը արծաթափայլ կամ ոսկեփայլ; Թղթապանակ կաշվեպատ /70 հատ/, չափսը՝ 220x310 մմ /փակ վիճակում/: Կազմը կաշվե "Wintan Nubes": Կազմի անկյունները կլորացված, սպիտակ: Խտությունը՝ 1200գ/մ² և 1000գ/մ²: Կազմի երեսամասում՝ Նախարարության տարբերանշանի և անվանման ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Թղթապանակի բացվածքի աջ և ձախ կողմերը պատրաստված են թավշյա նյութով, անկյուններում՝ մետաղական անկյունակներ: Աջ մասում ամրացված է թափանցիկ ժապավեն 0,7 սմ լայնությամբ; թղթյա տուփեր /70 հատ/, չափսը՝ 260x390x90մմ, թուղթը բարձրորակ դիզայնային 200գ/մ²: Լամինացված թավշյա թաղանթով: Երեսամասում՝ նախարարության տարբերանշանի և անվանման 90x25 մմ ոսկեփայլ կամ արծաթափայլ եռաչափ դաջվածք: Բռնակները՝ պարանե: Պարտադիր պայման՝ գնման հայտը ներկայացնելուց առաջ առաջարկվող նմուշը պարտադիր համաձայնեցնել պատվիրատուի հետ /թղթի որակը, գույնը և դիզայնը/: |
| 2 | Այցեքարտերի պատրաստում | դրամ | 300 000 | Այցեքարտերի պատրաստում /5000 հատ/, չափսերը՝ 90x50մմ չափով, պատրաստված 350 գր. դիզայնային թղթից ջերմային եռաչափ դաջումով անգույն 44 միանշանով /չափսը 1500/, ռուսերեն և անգլերեն սև գույնի օֆսեթ տպագրությամբ, անվանական. Պարտադիր պայման՝ գնման հայտը ներկայացնելուց առաջ առաջարկվող նմուշը պարտադիր համաձայնեցնել պատվիրատուի հետ /թղթի որակը, գույնը և դիզայնը/ |
| 3 | Ձևաթղթերի պատրաստում | դրամ | 226 000 | Ձևաթուղթ /4000 հատ/, A4 ֆորմատի, հատուկ պաշտպանված բլանկի ձևաչափով, ջրանիշով, գունավոր տպագրությամբ. Պարտադիր պայման՝ գնման հայտը ներկայացնելուց առաջ առաջարկվող նմուշը պարտադիր համաձայնեցնել պատվիրատուի հետ /թղթի որակը, գույնը և դիզայնը/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Թղթյա տոպրակների պատրաստում | դրամ | 150 800 | Թղթյա տոպրակների /16 հատ/ չափսերը՝ 26x39x9 սմ պատրաստված գունավոր մուգ կապույտ ռեկլրատից 200գր թղթից, դիմացի մասում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության անվան լոգոտիպով, հայերեն ու անգլերեն լեզուներով, ոսկեգույն կամ արծաթագույն 90x80մմ չափերով դաջմամբ, ռելիեֆային դրոշմումով, թավշյա լամինացմամբ. բռնակները՝ պարանե: Պատվիրատուի պայման՝ գնման հայտը ներկայացնելուց առաջ առաջարկվող նմուշը պարտադիր համաձայնեցնել պատվիրատուի հետ /թղթի որակը, գույնը և դիզայնը/: |

| Աշխատանքի կատարման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից | 30.09.2017թ. |

**Պատվիրատու**

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505[illegible]

**Ա. Ենգիբարյան**
(ստորագրություն)

**Կատարող**

**«Ակտիս» ՍՊԸ**
Հասցե՝ ք.Երևան,Արզումանյան 4, բն.27
Հ/Հ 11800123758500
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01240876

**Գ.Հակոբյան**
(ստորագրություն)

Հավելված 2
«20» 05 2017թ. կնքված
N ՀՀ ՏԶՆՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-17-11/1-25-17 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ ըստ ՀՊ | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | Գրասենյակային արտադրանքի հավաքածուի պատրաստում | - | - | - | - | - | 2 423 000 | 3 601 000 | 3 601 000 | 3 601 000 | 3 601 000 | 3 601 000 | 3 601 000 | 3 601 000 |
| 2 | Այցեքարտերի պատրաստում | - | - | - | - | - | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 |
| 3 | Ձևաթղթերի պատրաստում | | | | | | 226 000 | 226 000 | 226 000 | 226 000 | 226 000 | 226 000 | 226 000 | 226 000 |
| 6 | Թղթյա տոպրակների պատրաստում | - | - | - | - | - | 150 800 | 150 800 | 150 800 | 150 800 | 150 800 | 150 800 | 150 800 | 150 800 |
| | Ընդամենը | - | - | - | - | - | 3 099 800 | 4 277 800 | 4 277 800 | 4 277 800 | 4 277 800 | 4 277 800 | 4 277 800 | 4 277 800 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02585983

**Ա. Շահնազարյան**

(ստորագրություն)

**Կատարող**

**«Ակտիս» ՍՊԸ**
Հասցե՝ ք.Երևան, [illegible] 4, բն.27
Հ/Հ 1800123758500
«Անելիք բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01240876

**Գ.Հակոբյան**

(ստորագրություն)

Հավելված 3
«20» 05 2018 թ. կնքված
N ՀՀ ՅԶՆՆ-ԾՀԱՇՁԲ-15/3-17-11/1-25-17 ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____ | ____ |
| գտնվելու վայրը ____ | գտնվելու վայրը ____ |
| հհ ____ | հհ ____ |
| հվհհ ____ | հվհհ ____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

§ ¦§ ¦ 20 Â

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____
____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «___» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____
Պատվիրատուն՝ ի դեմս ____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «___» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N հաշվետվությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ____ | ____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____ | ____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«20» 05 2017թ. կնքված
N ՀՀ ՅՋՆՆ-ԾՀԱԾՁԲ-15/3-17-11/1 -25-17 ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________________ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)

--------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------------
(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- — -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________<br>ազգանուն, անուն | ____________________<br>ազգանուն, անուն |
| ____________________<br>ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |